# Պրոֆեսոր Միհրան Ս. Աղբաբյանի անվան պրոֆեսորական պաշտոն

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) ընդունում է դիմումներ Միհրան Ս. Աղբաբյանի անվան պրոֆեսորական պաշտոնի համար: Դոկտոր Աղբաբյանը համալսարանի հիմնադիր եւ պատվավոր նախագահն է: Աղբաբյանի անվան պրոֆեսորական պաշտոնը ՀԱՀ-ին թույլ է տալիս ամեն տարի համալրել դասախոսական կազմը՝ ՀԱՀ-ի հիմնական ծրագրերից որեւէ մեկում գերազանց ակադեմիական նվաճումների հասած մի նոր անդամով: Այս պրոֆեսորական պաշտոնը տրվելու է այն անձանց, ովքեր սկսում են իրենց ակադեմիական կարիերան: Թեկնածուները պետք է մեկից երեք տարի անցկացնեն ՀԱՀ-ում՝ մասնակցելով կրթական եւ հետազոտական ծրագրերին, ինչպես նաեւ ՀԱՀ-ի կենտրոնների նախագծերին: ՀԱՀ-ի նպատակն է, որ Աղբաբյանի անվան պրոֆեսորական պաշտոնը ստացողի համար դառնա հեղինակավոր մի նվաճում: Սա համահունչ է երկարաժամկետ դասախոսական կազմ հավաքագրելու ՀԱՀ-ի նպատակին՝ շեշտելու համար ուսումնական ծրագրերի շարունակականությունը:

*Հայաստանի ամերիկյան համալսարանը ստեղծվել է 1991 թ.-ին որպես ամերիկյան բարձրագույն կրթության մոդելի վրա հիմնված ավարտական համալսարան: Պաշտոնապես Կալիֆոռնիայի համալսարանի գործակիցն է: Առ այսօր համալսարանը աճել է եւ ներկայումս տրամադրում է մագիստրոսի աստիճան շնորհող 6 ծրագրեր՝ արդյունաբերական ճարտարագիտության եւ համակարգերի կառավարման, գործարար կառավարման, քաղաքագիտության, հասարակական առողջապահության, անգլերենը որպես օտար լեզվի ուսուցման, միջազգային եւ համեմատական իրավագիտության բնագավառներում: ՀԱՀ-ի առաքելությունն է ապահովել կրթական, հետազոտական ծրագրեր եւ այլ ծառայություններ, որոնք ուսանողին պատրաստում են Հայաստանի եւ տարածաշրջանի շարունակական զարգացման՝ այնպիսի միջավայրում, որն արժեւորում եւ խթանում է ակադեմիական գերազանցությունը, ազատ հարցապնդումը, գիտականությունը, ղեկավարման գիտակցությունը եւ հասարակությանը ծառայելը:*